Lkh
233

1999

43901 - U. h.

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆՑ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ · Ի Ս · ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾԻՆ · Ի ՎՐԱՍՏԱՆ ԵՒ Ի ԲԵՍԱՐԱԲԻԱ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1808 · ՅԱՄ ՏԵԱՌՆ 1843 ։

---

*Հաւաքեալ արժանապատիւ Տ · Գրիգոր Վարդապետի Մ · Գրարատեանց 'ի Մխիթարեանս Թենէ սրբոյն Էջմիածնայ ։*

1203. Զ

28035-62

**1843 ՏՊՆԱԼ ՌՄՊԼՌ**

## Ի ՁԱՐԻՊՈՆԻՔ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱԳԱԾՈՒՆԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

233-60

29 237

# ԸՍՏԵՐԳԱՏԻ ԱՆՀԱՍԱԿԱՑՈՒԹԵՆՆԵՐՆ ՏԵՐՈՒՆ ՏԵՐՈՒՆ ԵՎ ԳԵՐԱՅԱՆՈՒ ԸՍՏՈՒՆԸՆԴ ԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԸՍՏԵՐԳՈՒՆԵՐՈՒ ՀԱՅՈՑ ։

Ամենախոնարհ ակնածութիւն ։

Աստուածարեալ Տէր ։

Զերերևելի երևելի անմահաստեղն բուսոց սիրաբորբութեանց զանուշակ պտուղս Ձերումդ ընդհանուր սրբազան Հայրութեան իքիմա տարրացուցանել Ազգիս հասարակութեան պատեհ երջանիկ որդիացելոցս հանդիսացեալ հարազատ սրտի , ամենախորժ բաղձանօք 'ի տիպ արձանացուցեալ բարեհոչակէ նորահիմն ընկերութիւնս Արագածունեաց՝ իւրովն յատուկ տպարանաւ ։

Ա՜ման զի զի՞նչ այլ ինչ ախորժելի հոգւոցն հայրենասիրաց , քան զանմոռաց յիշատակութեամբ զերախտաւորաց իւրեանց ունելով անջինջ 'ի սրտի զշնորհս ։

Խարեհաճեսջիք ապաքէն՝ մաղթեմ Տէրդ Աստուածարեալ, ընդունիլ զանդրանիկ խայրիս սոյն մերումս ձեռնարկութեանց՝ զոր բարեգուշակ ինձ տեսութեամբ նուիրեալ՝ որպէս և միշտն՝ և յաւիտեան ամենայն հնազանդութեամբ մնամ

ՍՐՈՒԱԶԱՆ ՕԾՈՒԹԵԱՆ ՁԵՐՈՒՄ:

Ընդունողուն ծառայ
Ի. Հ. Մելիք-Եղիազարեանց
Հոգեբոյս Աբեղայութեանց
Ընդիրուն

Զիմաստութիւն նորա տեսցեն բազումք,
և յաւիտեան յաւիտենից օրհնեսցեն զնա.
և անուն նորա կեցցէ՝ և մի ջնջեսցի յիշատակ
նորա։

Սիրաք. ԼԹ. 12

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

Զազգասիրական սխրագործութեանց Տեառն Ներսիսի Ողբընտիր Հայրապետի ամենայն Հայոց՝ 'ի Ս. Կաթուղիկէն Էջմիածին, 'ի Վրաստան և 'ի Ռեսարաբիա յամէ Տեառն 1808. ցամ Տեառն 1843։

Բազմաց 'ի Հայրենասիրաց յազգի մերում ապաքէն ցանկալի են ցարդ գիտել զլեռվին զբազմահոչակ զազգասիրական սխրագործութիւնս Ողբին Վեհաստիճանութեան Տեառն Ներսիսի Ողբընտիր Հայրապետի ամենայն Հայոց, զորոց թէև գիտեն 'ի համբաւոյ և մանաւանդ 'ի գրոց 'ի լոյս ընծայեցելոց 'ի տպարանի Պարոցին իւրոյ 'ի Տփխիս, սակայն և այսու ամենայնիւ բազմաց այնոցիկ անլուր են բազումք։ Ուր որ յանմահութիւն բարերարութեանց նորին առ ազգ մեր և առ յիշատակ Անուան, քաղ-

ւածու համառօտեցի զսոյն 'ի մեծամեծարար ազգա-
պարծանք սխրագործութեանց՝ որոյ որ 'ի հաւաս-
տութեանց և որ 'ի բազմաթերթ նամակաց նամա-
կաց՝ որոյ Ս. Հաստիճանութեան առ սրբազան Սի-
մէոնն Ամբ. Եպիսկոպոս Ռշնունեանց տեղակալ փո-
խանորդ Առաջնորդարանի նորին 'ի Տփխիս :

Օրն սխրագործութիւն ասեմ աստ 'ի Հայրենիս
իւր Հայաստան , զորս արար նա թէ յաթոռս և թէ
'ի վիճակն յանձնեալս իւրում առաջնորդութեան
ըստ հանձարեղութեան կարգին սրբութեան . որ և
հարին հռչակեցին զԱնուն նորա Ստեծագործ , 'ի
հռչակ համբաւոց ընդ ամենայն ազգ մեր և ընդ բա-
զումս Եւրոպացւոց , նախանձելի յօրինեալ զնա
արժանաւոր դրուատից գովասանութեան :

Ասասանօր եդից նախ՝ որքան ինչ արար նա յաթո-
ռն Էջմիածին զուսումնասիրական գործառնութիւնս
'ի լուսաւորութիւն հոգեւոր մանկանց աշակերտելոց
նմին՝ և զհաստատութիւն սինհոդոսական կառա-
վարութեան վանացն , և ապա զոր ինչ 'ի Ս. Ղաս-
տան և զոր 'ի Ռեսարաբիա յայժմեան վիճակ իւր 'ի
Ռուսաստան , և զոր ինչ 'ի բաց 'ի մեծագործու-
թեանց նորին մնացին , 'ի լոյս հանցէ աշխարհի բազ-
մահարուստ նորին տարեգրութիւն , զորմէ ինքնին 'ի
թուղթսն իւր առ Սիմէոնն Ամբ. Եպիսկոպոս ասէ

"Լմեկ հնար իցէ յղել 'ի միասին զամենայն թուղթսն մեր զհին և զնոր, որ գտանին 'ի մերում տան . . . քանզի յայնցանէ բազումք հաշուագիրք են և բազումք պատմութեանց նիւթք և ինձ պիտանացուք երկոքին„ :

'Ի վերահաստատութեան Տէր Դանիէլ Կաթուղիկոսի 'ի Հայրապետութիւն յամի 1807 . 'Որին Սրբազնութիւնն 'Ներսէս, որ էր յայնժամ 'ի Ռուսաստան առ Տէր Եփրեմ կաթուղիկոսի յայնժամ Ընդաջնորդին Ընտրեալանայ, գնացեալ անդ վասն ծանուցանելոյ նմին զամենայն անցսն անցեալս Յէջմիածին յաւուրս Դաւթի, գառնայ Յէջմիածին. և առ կենդանութեամբ Տեառն Դանիէլի 'ի ձեռին կալեալ զկառավարութիւն աթոռոյն, 'ի կարգ մուծանէ զառանին հանգամանս միաբանական եղբարց կեցութեան. և ապա ըստ իւրում յառաջագոյն տեսութեան և նախագաղափարելոյ 'ի միտս զընթացս շաւղաց կառավարութեան քաղաքական և հոգևորական գործոց 'ի Ռուսաստան, հաստատէ և Յէջմիածին զԱիւնհոգոսական կառավարութիւն յերկոտասան անդամոց, յորս յամենեսին նախաձայն ինքնին, յորոց և բաղկացուցանին կառավարութեան' գրագիրք և գործակալք. որպէս զի զամենայն ազգային և զվիճակային հոգևոր գործս վերաբերեալս

Ս. Թոռոյն՝ վճռեսցեն նոքին ըստ խորհրդոյ տնօրէնութեան Կաթուղիկոսին 'ի պայծառութիւն ազգի, և օրըստօրեայ բարեկարգութեան եկեղեցւոյ Հայաստանեայց։ Եւ ահա այսպէս սկիզբն էառ աստ 'ի սուրբ Էջմիածին սինհոդոսական կառավարութիւն ցայսօր ժամանակի. (թէև այժմ ունի տարբերութիւն ըստ նորոգ կարգադրութեան Կայսեր Ռուսաց) զոր 'Նորին Վեհափառութիւն կոչէ 'ի թուղթսն իւր "Սուրբ ժողով բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի,,։

'Ի սմին յայսմիկ միջոցի 'ի վայելչութիւն և 'ի զբօսանս միաբանութեան Ս. Թոռոյն, արկանէ 'ի հարաւոյ նորին անտառ գեղեցիկ յընդարձակ դաշտավայրի, 'ի զուարճալի դիրս. որոյ արդէն չերևին հետք ուրեք։

Հետ մահուան Տեառն Դանիէլի Յ. Երևան՝ որ 'ի պատանդութեան անդէն կայր 'ի Պարսից՝ բռնութեանց յաւուրս պատերազմաց ընդ Ռուսաց, և յետ օծութեան Ս. Փրեմի 'ի կաթուղիկոսութիւն յամի 1810. վայելուչ ևս խորհրդով և ազգասիրական փութոյ եռանդեամբ սկիզբն առնէ հիմնարկութեան մեծակառոյց ուսումնարանին Էջմիածնի 'ի հիւսիսոյ յարևելից վանացն 'ի վերայ տանեաց դասակարգի սեռնկաց միաբանից, ուր զառաջինն լեալ ասի պատ-

բիարգարանին Տեառն Փիլիպպոս կաթուղիկոսի , յաւարտ հասուցանէ զայն հոյակապ շինուած յամի 1813 . ըստ ցուցանելոյ երից արձանագրոց ուսումնարանին , որ և ևս է եդեալ յորոշեալ ճակատամէջն դրանց նորին , հասեալ 'ի ձեռս մեր յամին 1837 , 'ի Փիշնև . այլ թէ ընդէ՞ր չեղան յայնժամ արձանագիրքն այնոքիկ , պատճառն է , զի յաւարտ շինութեանն կարգեալ գոլով Հիմնադրին յառաջնորդութիւն Տփխեաց , անձեռնհաս լինի 'ի նոյն , զորս և առ յիշատակի գիցուք ստորև :

Այպա յամի 1814 . այնինչ հաստատի անդէն 'ի Տփխիս յաթոռ առաջնորդութեան , այնուհետև ընդարձակին նմա բազմադրուատ շքեղապանծ ասպարէզք գովութեան պատուոյ և պարծանաց 'ի համազգեաց և յայլազանց . մանաւանդ և այնու առաւել , յորժամ ձեռն 'ի գործ եդ ծաղկեցուցանել զուսումնականութիւն մերս հայրենի բարբառոյ և գրականութիւն հայկական . և ածել 'ի վիճակ բարեկարգ զամենայն հոգևորական գործոց կառավարութիւն զյանձեղեալն իւրում հովուապետութեան , որ ցայն վայր խառն 'ի շփոթ գրեթէ 'ի թագնութեան կայր ըստ վաղեմի սովորութեան վրաստանեայց . զորմէ պարզապէս ևս գրէ ինքնին 'ի թուղթն իւր առ Սիմեոն եպիսկոպոսն . թէ որպէս նախքան զառաջնոր-

գութիւն իւր անդ, ամենայն կարգ և կառավարութիւնք եկեղեցականք շրջեալ էին յանկարգութիւն, թէ զիարդ յետ մտանելոյ իւրոյ յարքեպիսկոպոսութիւն Տփխիսոյ՝ կառավարութիւնք ամենայն ընթացան 'ի կարգ բարեկարգ։

Արդ՝ նա ինքն յետ յառաջ բերելոյ զձախորդութիւն աշխարհի 'ի յաջողուածս մարդոյ, գրէ օրինակ զայս "Հնօրէ մտանելոյ իմ 'ի պաշտօն վիճակաւոր արքեպիսկոպոսութեան անդէն 'ի վրաստան յամի 1814. զամս իբրև վեց յետին արարեալ իմ զամենայն անձնական օգուտ, ճգնեցայ միայն ամենայն զօրութեամբ և կարողութեամբ մարմնոյ իմոյ և մտաց առ կարգաւորել զամենայն անկարգութիւն եկեղեցական կառավարութեանց և վերածել 'ի լոյս 'ի հրապարակ հասարակաց զվաղնջական անշաւիղ կորուստ եկեղեցական և ազգական օգտի և բարեկարգութեանց. յետ որոյ ընդարձակեցան ինձ այն ամենայն փառաւոր բազմահոչակ գեղապանծ հանդիսարանք, յորս գովութեամբ և բարեբանութեամբ ամենայն ազգասիրաց և բարեսիրաց հեռաւորաց և մերձաւորաց հայկազանց և այլազանց վայելչացեալն էաք առ հասարակ մեք և դուք և ամենայն վիճակաւորք մեր։

Այսպէս սորա վառեալ միանգամայն յոգի ազգասիրութեան 'ի պայծառութիւն հայրենեաց և հայրե-

նակցաց, գեղեցիկ ջանասիրութեամբ հիմնարկէ զբաղ-
մահռչակն զայն ուսումնարան 'ի Տփխիս՝ անուանեալ
«Ներսէսեան դպրոց», և հաստատէ զտպարան զեր-
կոսին աղբիւրս գիտութեան ընծայեալ Ազգայ Ար-
որդայ Հրեմեան Արծրունւոյ. յաւարտ հանեալ
զայնոսիկ շինուածս ազգասիրութեան, և հան զնոսին
'ի ծաղկեալ վիճակ բարեկարգ ընդ անմիջական վե-
րատեսչութեամբ իւրով, կարգեալ զուսուցիչս Հայ,
Ռուս Պարսիկ և Պաղդիացի լեզուաց 'ի կրթու-
թիւն որդեգրաց նորին 'ի գիտութիւն՝ և յազգ յազգ
մակացութիւնս սխրապանծ արհեստից ազատակա-
նաց, 'ի ձեռին ունելով զճիշդ և զանխոնջ վերազն-
նութիւն առ անապրիլաք ընթացից նոցին 'ի շաւիղ
բարձրագոյն ուսմանց և 'ի բարբառ ազգաց. որովք
'ի փոքու ժամանակի յառաջեցին մեծամեծ բարիք
հասարակութեան գրեթէ ընդհանուր ազգի, մինչև
առ հասարակ զարգացելոցն 'ի նմին հեռաւորաց և
մերձաւորաց համարել զանձինս իբրև յառաջին
աւուրս ոսկեղէն դարու երջանկութեան Հայաստանի
և տեսանել զառաջին խնամակալ և Արկենաս զնորն
Արեսրովբ զՆերսէս, անմահ յիշատակագրեալ յար-
ձան մտաց և հոգւոյ զայսօրինակ շնորհս երախտեաց
նորին ընդ դարս ժամանակաց. և ոչ այսչափ միայն,
այլև 'ի տրիտուր և 'ի հոչակ բազմագիմի բարերա-

բութեանցն, զպտուղ շնորհապարտ սրտից մաղթանաց գոհութեան զնմանէ ընծայաբերեն 'ի պատարագ նմա զգրաւոր երկս վաստակոց քրտնաջան աշխատանաց մատենագրեալ անդէն 'ի տպարանի ուսումնարանի նորին, անուանեալ "Արարատեան Ներսէսեան դպրոցի, ուր ոչ այլ ինչ է յաւէտ տեսանիլ, քանզի գոհութիւն գոհութիւն և բարերարութիւն վսեմապանծ Անուան Տերին:

Այլ թէ զքանի՞ եհաս թիւ աշակերտելոց նմին, և որքան ուսուցիչք նոցին, և զիարդ պահպանութիւն, կամ ուստի՞ ոռճիկ նոցին և ծախք յընթացս հաստատութեան ուսումնարանին՝ և աշակերտացն յարատեւութեան անդէն ցնչն 'ի Տփխիսոյ Տերին Ա Եհաստիճանութեան, կարգեցից միբստմիջէ որ ընդ այսմ և որ առանձին:

Դայց առ 'ի շարունակել զմեծահամբաւ մեծագործութիւնս նորա կցեցից և ես. զի յառաջ քան զայս յամի 1821. այնինչ սրբազնագոյն Հայրապետն Տէր Գրիգոր խոնջեալ 'ի ծանրատաղտուկ բռնաբարութեանց ազգանց Պարսից՝ առ ահի հարկին պարտուց պարտաւորութեան Աթոռոյ Էջմիածնի, յուսացեալ 'ի ձեռնտուութիւն ազգին՝ 'ի կողմանս Փայտակարանու և Արցախայ անկանէր. Տերին Ա Եհաստիճանութիւն Ներսէս ընդառաջեալ 'ի Շուշի

յաշխարհին Ղրցախայ , հոգ թափեաց անդէն ամենայն հարկաւորացն նմին և եղելոցն ընդ նմա խորհրդական հոգևորականաց 'ի տարակացութեան անդ . և խորհրդակցութեամբ ամենեցուն հրաւիրեաց զսրբազնագոյն Կաթուղիկոսն 'ի սուրբ Աշանի վանս Հաղբատայ , որպէս զի դիւրին լիցի ծանուցանել անտի ամենայն հասարակութեան ազգի Հայոց ընդ ներզսակրութիւն Աթոռոյ և աթոռայնոց յերեսաց Պարսից . և օգնականութեամբ բարեպաշտից մերազանց թեթևացուցանել զծանրութիւն պարտուցն պահանջմանց :

Ընդ ապա 'ի Հաղբատ 'ի պէտս Հայրապետին Տեառն Եփրեմայ և ընդ նմա եղելոց վերանորոգէ զբազմաթիւ սենեակս վանացն՝ զխախտեալսն յառաջագոյն . և յայնմ հետէ լինի կառավարիչ կաթուղիկոսական տան և հոգևորական գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ :

Իսկ յամի 1826 . յորժամ Պարսիկք յաւարի առնուն զկողմանս հինչ սահմանամերձ տեղեաց Ռուսաց , յարձակեալ երկուստեք 'ի Երակայ գրեթէ մերձ 'ի Հաղբատ , և Ղրցախայ ցՏփխիս , ածապարեալ սրբազան Աբրհին գերապանծ հրաւիրէ զսրբազան Հայրապետն իւրով միաբանութեամբ 'ի Տփխիս յառաջնորդարանն Հայոց . ուրանօր և երախ-

տապարտ սիրոյ ջերմեռանդութեամբ և գգուանօք պահպանէ զնորին ծաղկեալ ծերութիւն խնդամիտ ակնածութեամբ յիւրումն աչեզարդ օծութեան ցամ Տեառն 1828 :

'Ի սմին ժամանակի զարգացեալ ունելով զուսումնարան իւր 'ի բարգաւաճ վիճակի յառաջադիմութեան , 'ի մէջ այսչափ խառն գործոց կառավարութեան տայ բերել 'ի Փարիզոյ զուսուցիչ Դաղղիական լեզուի զՀայկազուն ոմն Հակոբ Շահան Ջրպետեան Հանդերձ ընտանեօք . և վասն առաւել պայծառութեան և ընդարձակութեան նորին , գնէ 'ի ձեռն նորին մեծահոգ երկասիրութեամբ յարդեանց պարտաւորութեան իւրոյ զամբողջ տպարան Դաղղիական լեզուի ամենայն պարագայիւք 'վերաբերելովք նմին , ըստ ցուցանելոյ ինքնաձեռագիր հաշուացուցակութեանց նորին առ Միմէոնն Եպիսկոպոս . յորմէ արտահանեալ կարգեցից 'ի վերջէ գործոյս զծախս առաջնորդարանին , ուսումնարանին և տպարանին : 'Նախ՝ թէ ՈՐքան ծախիւք երեր նա զուսուցիչն Դաղղիացի լեզուաց , և ՈՐքան ՈՒր առաքեաց դրամն առ նա ցմտանելն 'ի Տփխիս . երկրորդ՝ զի՞նչ վճար ծախուց Հանդերձանաց Դաղղիական տպարանին . երրորդ՝ թէ Միմէոնն Ը՛ՐՔ Եպիսկոպոս զՈՐքան ծախեաց 'ի վերայ առաջնորդա-

բանին , տպարանին և դպրոցին , յորմէ հետէ յանձ-
նեցաւ նմա պարտաւորութիւն առաջնորդական . և
շրջեալ՝ որքան ծախս արար 'ի Ներսիսեան դպրո-
ցին 'ի մասին ուսումնական առարկայից՝ վերատեսուչ
նորա Յարութիւն վարժապետ Լամդարեանց յամէ
Տեառն 1827 , ց1830 :

Ոչ անխոնջ ջանագրութենէ իւրմէ բացայայտ ևս
գրէ ինքնին 'ի թուղթն իւր յասելն "Լմէ այլք ոչ
գիտասցեն , դուք բարեկամք գիտէք , զի չեմ ես ծա-
խեալ զգումարսն զայնոսիկ իմոց պարտաւորութեանց՝
վասն ուտելոյ կամ ըմպելոյ և կամ իմոց պճնու-
թեանց հանդերձից և այլոց վայելչութեանց . և չեմ
մասնակցեալ յայնցանէ իմոց աղգականաց կամ սի-
բելեաց և ատելեաց . այլ որպէս և ախորժելի է յա-
մենայն բարեսիրաց և 'ի չարասիրաց ևս , զայն գու-
մար իմոց պարտաւորութեանց ընդ կենաց իմոց և
մարմնոյ և ոսկերաց՝ ցանկացեալ եմ կարգել 'ի
փառս Աստուծոյ և 'ի մեր յօժարութիւն առ վայելս
աղգի և հայրենեաց . որպէս և ապացուցանին բարձ-
բարերձ հոյակապ շինուածովք աղգաշահութեանց ,
աղգական վայելչութեանց , եկեղեցական մեծ վայել-
չութեանց և բազմահոգ ջանակուռ երկամիտք իմովք
ըստ ամենայն պատկանելոցն սրբոյ Աստուծոյ մերոյ լուսոյ ,
և 'Լորին սրբազնագոյն մեծ Քահանայապետութեան

և ամենայն եղբարց նոցին հոգևորականաց»։

Իսկ ապա յամի 1827 . 'ի շարժիլ պատերազմաց Պարսից , այնինչ տէրութիւն Ռուսաց յարուցանէ զմարտ ընդդէմ նոցին յարձակմանց 'ի փրկութիւն Հայաստանի , գայ Յէջմիածին ընդ գլխաւոր կառավարչին Ս ջաստանի Իւան Թէոդորիչ Պասկևիչի սպարապետի զինուորութեանցն Ռուսաց . և կացեալ անդէն յընթացս սաստկագին տօթոյ ամառան , պաշտպան հանդիսանայ Ս թոռոյն 'ի պաշարմանց արքայորդւոյն Պարսից Ս բաս Միրզայի , զօրավիգն օգնականութեամբ բերդապահ զօրացն Ռուսաց , որոց անդէն զետեղեալն էին արանց իբրև հինգ հարիւրոց 'ի հսկումն վանաց միանգամայն և կահից և կարասեաց պատերազմի և պաշարոյ սաստկազօր գնդին Պասկևիչի . բայց առ անթիւ բազմութեան պարսկազօրուն , որ զսիւնս տիեզերաց շարժել դիտէին , զանխուլ հրեշտակութեամբ զհրամանատար զօրաց Ռուսաց Կրասովսկի՝ փութացուցանեն 'ի դաշտն Ս բարատեան չորս գունդ հետևակազօրք , որ յետ սրախողխող կոտորմահ վանելոյ զբիւրաւորս 'ի Պարսից , մտանէ Յէջմիածին փոքու ինչաւ 'ի զօրս իւր : Կոտանի յետ այսորիկ 'Լորին Ս Հաստատեանութիւն և 'ի պատերազմին յառման Երևանայ ընդ սպարապետին Պասկևիչի 'ի 1 հոկտեմբերի . և

յետ խաղաղութեան՝ կարգի դատաստանապետ 'ի քաղաքին, և յարատևեալ 'ի նմին՝ զայն ձմեռն զմեծ բանակ զօրացն Ռուսաց Յէջմիածին՝ կերակրէ 'ի համբարաց նորին։

Այս յամի 1828. վերստին դարձ արարեալ 'ի Տփխիս, յուղարկաւորէ զսրբազնագոյն Կաթուղիկոսն Տէր Եփրեմ 'ի հայրապետական գահ իւր Յէջմիածին. և ինքն յետ ոչ սակաւ միջոցի անցեալ 'ի Ռուսաստան ըստ հրաւիրանաց 'Նորին Կայսերական մեծութեան, կարգի վիճակաւոր Մեր Եպիսկոպոս 'ի Բեսարաբիա։

Եւ անդ ուրեմն այսօրինակ հայրենասիրութեամբ ջան եդեալ վճիտ 'ի տեսութիւն հանէ հասարակաց զամենայն եղանակ հոգևորական գործոց կառավարութեան վիճակի իւրոյ. և ոչ սակաւ իբրև զառաջինն յարդեանց պարտաւորութեան իւրոց վերանորոգէ զառաջնորդարան իւր՝ և զշրջապատս նորին ընդ գեղեցիկ շինուածովք տանց ըստ վայելուչ ձևոյ Ռուսաց 'ի շուք և յիշատակ մեծահռչակ Անուան իւրոյ 'ի փառս և գովութիւն Ազգիս։

Եւ 'ի վերջոյ ամենայնի վարեալ անդէն զառաջնորդութիւն իւր մինչ ցայս ներկայ ամ 1843, անվտանգ պահեալ 'ի ծովու աշխարհիս Ա՛ երին տեսչութեամբն վասն ազգիս Հայոց, ընտրեցաւ 'ի

Կաթուղիկոսութիւն մեզ՝ գլուխ Հայաստանեաց եկեղեցւոյ համահաւաքութեամբ ազգային ժողովոյ աստ 'ի սուրբ Կաթուղիկէն Էջմիածին 'ի 16 ապրիլի. հաստատեալ 'ի Կայսերէ ամենայն Ռուսաց ըստ գրութեան գլխաւոր Կառավարչին Վրաստանի 'ի 4 յուլիսի համար 6,739 :

## Աշխանաքիրք սասանարանին Յիսուսի և Հիմնարքին։

## Մակագրութիւն 'ի գլուխ սեմոց առաջին դրան Ուսումնարանին։

Ստուեր խորհրդածեալ մեծավայելուչ ուսումնարանի, Յեառն գործակցութեամբ յապայս կերտելի։
Ըստ մեծ վայելչութեան դստեր փառացի, սքանչելի Դահի, Աքքային երկնի։
Հրաշակերտ Աթոռոյ մայր եկեղեցւոյ Հայաստան ազգի, մեծ Կաթուղիկէի սուրբ Էջմիածնի։
'Ի թիւ հազարորդի ութհարիւրորդի, երեքտասանի, Փրկչին աշխարհի։

## Մակագրութիւն 'ի գլուխ սեմոց դրան սենեկի վարժապետին։

Վանքար պարգևաց Յեառն զօրութեանց,

յարգել երկիւղիւ զօրութեամբ կարեաց,
Ճափ է իսկական կրկնակի բարեաց,
անմահից կենաց վեհ մահկանացուաց։
Ելա ոչ յարգողաց աներկիւղ մոլեաց,
ինքնագատ վճռէ տուժիչ շնորհաց.
Այն Վրիստոս Յիսուս աւետարանեաց,

անշուշտ զայս պատգամ Մատթէոս գրեաց։
Ապա նախ խորհեաց առող քանքարաց,
Ի վերայ ահեղ զոյգ նպատակաց.
Ապա մուտ յայս տուն նիստ յաթոռ փառաց,
կարգեալդ ուսուցիչ մանկանց համբակաց։

## Մակաղրութիւն Ի գլուխ սենեկի Աշակերտաց։

Ռազումք եղիցին առաջինք յետինք՝
յետինք առաջինք.
Մի՛շտ են ճշմարիտք քաջ հաւատարիմք
բանք Աստուածայինք.
Ընն ձիրք արտաքինք՝ այլ կամք առանձինք
ազատ մարդկայինք.
Ամ իրձ ձգտեսցին՝ լինիլ առաջին,
շաւիղք են դիւրին։

---

## Յոցակ հանդէպ յանուց Պաղչիկան պապրանի։

Արիւր քառասուն մարք բոլոր գրոց՝ յորում են հաստարակ տառք, միջակ գլխագիրք, փոքր գլխագիրք, շեշտք, շեշտաւոր տառք, կէտք և այլն։

Ինքնունևորեք մարք նօտր գրոց՝ յորս են հասարակ տառք, շեշտք, շեշտաւորք և այլն:

Երեսունևհինգ մարք մեծ երկաթագրոց՝ յորս են նաև շեշտաւորք և այլն:

Ունն մարք գանազան զարդուց գրոց, երեսաց են:

Մի մեծ տիպար տպագրական առ ձուլել զերկաթագիրս Վաղղեացւոց՝ ևս Ֆայոց ըստ նոյն մեծութեան:

Մի փոքր տիպար ձուլելոյ զմիջակ և զփոքր գրչագիր, զբոլոր և զնօտր գիրս, զկէտս, զշեշտս և զզարդս և այլն:

Մի երկաթեայ գրաշար անուանեալ Հոլանդական:

Մի երկաթեայ գրաշար անուանեալ գաղղիական:

Մի գրաշար փայտեայ վասն շարելոյ զգլխագիրս, զաղիւսակս և այլն:

Քանևհինգ Վաղղիական լտերք ձուլեալ, նշանագիրք երկրաչափականք, աստղաբաշխական, գրահաշուական, բնաբանական, և այլն:

Տասնեւեօթն ձուլեալ զարդք տպագրականք ընդ մեծ և ընդ փոքր, յորս են ձևք մեղուաց, օձից, ծաղկանց, թռչնոց, գաշտարտօրէից և այլն:

280354-62

1203.

## Հայոց ծախուց արարելոց 'ի Վիմիոնն Աղբ եպիսկոպոսէ 'ի վերայ Ներսիսեան դպրոցի և տպարանին տփխիսոյ՝ սկսեալ 'ի 1էն, մինչև 'ի 1 յունվարի 1830 ամի։

| | Ֆրանք. | մանէթ. | գաֆիկ |
|---|---|---|---|
| Գումարք ծախուց արարելոց 'ի Սիմիոնն Աղբ եպիսկոպոսէ 'ի վերայ Ներսիսեան դպրոցի և տպարանին տփխիսոյ՝ սկսեալ 'ի 1էն, ապրիլի 1827, մինչև 'ի 1, յունվարի 1830 ամի | ——— | 3550 | 40 |
| Գումարք ծախուց արարելոց 'ի Ներսիսեան դպրոցի և ուսուցչարանին տփխիսոյ՝ 'ի յետն Յարութիւն վարժապետի Ալամդարեանց՝ սկսեալ 'ի 1 յունվարի 1727 ամի մինչև 'ի 1 յունվարի 1830 ամի, | ——— | 3503 | 50 |
| Գին գաղիական տպարանին Ներսիսեան դպրոցի՝ ընդամենն ֆրանք | 1545 | ——— | ——— |
| Ճանապարհորդական ծախս ուսուցչին գաղղիացի լեզուին Յակոբայ Ջրպետեան ցմտանելն նորա 'ի տփխիս՝ բոլորն։ | 23.614 | ——— | ——— |
| Նոյն Ջրպետեանին 'ի տփխիս յընթացս մի և կէս ամաց՝ բոլորն մանէթ։ | ——— | 1595 | ——— |
| Ի ծախս անձնական պիտոյից նորա 'ի 1827 ամէ՝ ցվերջ օգոստոսի 1828 ամի։ | ——— | 463 | ——— |

Spec 54